

**ՀԱՐՑ**՝ Ինչպիսի փաստաթղթեր են անհրաժեշտ երեխային երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու համար

**ՊԱՏԱՍԽԱՆ**՝ Երեխային գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու համար երեխայի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը երեխայի բնակության վայրի մարզպետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում,
- 2) ծննդյան վկայական (բնօրինակը և պատճենը),
- 3) բժշկական տեղեկանքներ երեխայի առողջական վիճակի մասին,
- 4) բնակության վայրից տեղեկանք ընտանիքի անդամների մասին,
- 5) տեղեկանք ընտանեկան նպաստի իրավունք ունենալու մասին (առկայության դեպքում),
- 6) ծնողի կամ երեխայի օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- 7) տեղեկանք երեխայի բնակության վայրի շրջապատի համաճարակային վիճակի մասին: